




**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ**

(8 դեկտեմբերի, 2020 թ.)

Սիրելի՛ զաւակներ մեր ի հայրենիս եւ ի Սփիւռս,

Պատերազմի արհաւիրքից յետոյ ցաւի, մտահոգութեան եւ տագնապի ծանր օրեր ենք ապրում: Հազարաւոր մեր հերոս զաւակների նահատակութիւնը, պատմական Արցախ աշխարհի զգալի մասի կորուստը, պատերազմի աղէտալի հետեւանքները եւ արտաքին վտանգի առաւել մեծ սպառնալիքն ալեկոծել են մեր հոգիները, խաթարել համերաշխութիւնը եւ ազգային միասնականութիւնը հայրենիքում ու Սփիւռքում: Ստեղծուած ծանր իրադրութիւնը եւ ներքաղաքական խոր ճգնաժամը նոր վտանգների առջեւ են կանգնեցրել հայրենի մեր երկիրը՝ կենսական դարձնելով յառնած լրջագոյն մարտահրաւէրների հրատապ լուծման անհրաժեշտութիւնը:

Օրէցօր բարդացող իրավիճակի առնչութեամբ քննարկումներ ենք անցկացրել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի եւ Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամների հետ: Հանդիպումներ ենք ունեցել նաեւ Հանրապետութեան նախագահի, Ազգային ժողովի նախագահի, քաղաքական ու ազգային զանազան կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ: Համընդհանուր համոզումն է, որ օրհասական այս կացութիւնը պէտք է իր հանգուցալուծումը գտնի բացառապէս սահմանադրական ճանապարհով ազգային համերաշխութեան ու ողջախոհութեան պայմաններում:

Հայրենի մեր երկրում տեղ գտնող տագնապալից զարգացումներին եւ առկայ մտահոգութիւններին ընդառաջ՝ Մենք հանդիպում ունեցանք նաեւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ տիար Նիկոլ

Փաշինեանի հետ: Թելադրուած երկրի առջեւ ծառացած եւ ահագնացող ներհասարակական լարուածութեամբ, արտաքին եւ ներքին լուրջ մարտահրաւէրներով եւ վարչապետի անձի նկատմամբ հանրային վստահութեան պակասով՝ հայրաբար յորդորեցինք յանձնառութիւն ստանձնել եւ վայր դնել վարչապետի լիազօրութիւնները՝ կանխելու համար հասարակական կեանքում ցնցումները, նաեւ հնարաւոր բախումներն ու ողբերգական հետեւանքները:

Այս առումով նաեւ կոչ ենք ուղղում Ազգային ժողովին՝ մեր հայրենիքի համար այս վճռորոշ պահին գործել ամենայն պատասխանատւութեամբ, ականջալուր լինել հանրութեան լայն շրջանակների կողմից հնչող պահանջներին եւ քաղաքական ուժերի հետ համախորհուրդ ընտրել նոր վարչապետ ու ձեւաւորել ազգային համաձայնութեան ժամանակաւոր կառավարութիւն: Միայն հանրային վստահութիւն ունեցող եւ արհեստավարժ անձերից կազմուած կառավարութիւնն է, որ կարող պիտի լինի կարգաւորել մեր ժողովրդի առջեւ ծառացած հիմնախնդիրները, վերականգնել ազգային համերաշխութիւնն ու միասնականութիւնը եւ կազմակերպել անվիճարկելի անհրաժեշտութիւն ներկայացնող խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները:

Հայրական Մեր պատգամն ենք բերում հաւատաւոր մեր ժողովրդին, իշխանութիւններին եւ ընդդիմադիր քաղաքական ուժերին՝ դժուարին այս օրերին զերծ մնալ բռնութիւն հրահրող եւ ատելութիւն սերմանող արտայայտութիւններից ու գործողութիւններից: Ազգովին համախումբ ջանք եւ ներդրում բերենք առկայ ճգնաժամի յաղթահարմանն ի նպաստ: Մեր նահատակ հերոսների վառ յիշատակը եւ նրանց նուիրական տեսիլքները իրագործելու սրբազան ուխտը մեր սրտերում՝ միաբանուենք ու գործենք յանուն մեր հայրենիքի լուսաւոր գալիքի, յանուն մեր ժողովրդի խաղաղ, ապահով ու բարօր կեանքի:

Աստուած պահապան եւ օգնական մեր ժողովրդին եւ հայրենիքին:

